ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» մարտի 2025 թվականի N: 116 - Ա ք. Գյումրի

ՕՖԵԼՅԱ ՍՈՒԼԹԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԱՅԻՍՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 61-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N181-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգի» 6-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մայիսյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Օֆելյա Սուլթանյանի 2025 թվականի մարտի 19-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Օֆելյա Սուլթանյանին 2025 թվականի մարտի 25-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մայիսյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է